ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 125-ԱՄՅԱԿԻՆ

Խոշորագույն հայագետ, գիտնական Մանուկ Աբեղյանի ծննդյան 125-ամյակին էր նվիրված ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի և Երևանի պետական համալսարանի համատեղ գիտական նստաշրջանը, որ տեղի ունեցավ մարտի 23-ին՝ ՀԽՍՀ ԳԱ նախագահության նիստերի դահլիճում։ Բացելով նստաշրջանը, ՀԽՍՀ ԳԱ փոխպրեզիդենտ Գ. Սարգսյանը նշեց, որ թեև կես դար է անցել Մ. Աբեղյանի մահվանից, սակայն նրա թողած գիտական հարուստ ժառանգությունը այսօր էլ մնում է ժամանակակից ու արդիական, անսպառ աղբյուր լեզվաբանների, բանագետների, ժողովրդական ստեղծագործության հետազոտողների համար։

Մ. Աբեղյանի լեզվագիտական հայացքների արդիականության թեմայով զեկուցում կարդաց ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Ջահուկյանը։ Նա մասնավորապես ասաց, որ Մ. Աբեղյանը մեկն էր այն եզակի գիտնականներից, որի ուսմունքը եվրոպական գիտության մակարդակի վրա էր։ Հազորդակից լինելով իր ժամանակի լեզվաբանական ուղղություններին, նա լեզուն համարում էր հոգեֆիզիկական երևույթ, որպես սկզբունք ընդունելով պատմականությունը։

Բանասիրական գիտությունների դոկտոր Ս. Հարությունյանի ելույթը նվիրված էր հայ վիպաասպելական բանահյուսության՝ Աբեղյանի տեսությանը։ Նա խոսեց Աբեղյանի բանագիտական ժառանգության մասին և ասաց, որ վիպական բանահյուսության պատմությունը մեծ հայագետը բաժանում է հինգ շրջանի՝ հմայիլներ և առասպելներ, առասպելախառն վեպ, ավանդական վեպ, Տարոնի պատերազմ. Սասնա ծռեր և վիպական երգեր։ Աբեղյանը դրանք բաժանել է պարբերաշրջանների և կատարել մեթոդական և մեթոդաբանական բարդ հետազոտություններ։

«Մ. Աբեղյանը և հայոց հին գրականության ազգային յուրահատկության հարցերը» զեկուցումով հանդես եկավ բանասիրական գիտությունների թեկնածու Վ. Վ. Ներսիսյանը։ Նա ներկայացրեց Աբեղյանի գիտահետազոտական մեթոդի կարևոր կողմերը, շեշտեց, որ հայ հին գրականությունն անշատ լէ այլ ազգերի մշակույթից ու գրականությունից, սակայն այդպիսի առնչությունները լեն խաթարում հայ գրականության ազգային նկարագիրը։

Աբեղյանի նամակագրական ժառանգության մասին խոսեց բանասիրական գիտությունների դոկտոր Պ. Հակոբյանը։ Նա նշեց Աբեղյանի վիթխարի գիտական աշխատանքը սկսած Հայաստանի հանրապետության առաջին օրերից, նրա անգնահատելի ավանդը Երևանի պետական համալսարանի ստեղծման գործում, գործունեությունը՝ որպես գիտության և արվեստի ինստիտուտի ղեկավարի։

Աբեղյանին և հայերենի ուղղագրությանն էր նվիրված բանասիրական գիտությունների թեկնածու Պ. Շարաբխանյանի զեկուցումը։ Ուղղագրական հարցերը միշտ էլ եղել են Աբեղյանի ուշադրության կենտրոնում։ Իր առաջին ուղղագրական ուսումնասիրությունները նա կատարել է 1890 թ., երբ աշխարհաբարը նոր էր ստացել իր կերպարանքը և պետք է ամրապնդվեր։ 1908 թ. լույս տեսավ նրա ուղղագրական հոդվածների ժողովածուն։ Աբեղյանը կարծում էր, որ փոփոխությունները պետք է լինեն այնպիսին, որ իրարից լհեռացվեն երկու լեզուները՝ գրաբարն ու աշխարհաբարը։

Նստաշրջանում Ավ. Իսահակյանի «Մանուկ Աբեղյանի թարմ շիրիմի առաջ» գրեթե անհայտ հոդվածը ներկայացրեց բանասիրական գիտությունների դոկտոր Ավ. Իսահակյանը։

Ականավոր հայագետի մասին իրենց հուշերը պատմեցին Հ. Հովհաննիսյանը, Ա. Մանուկյանը և գիտնականի թոռը՝ Հ. Աբեղյանը։